ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 օգոստոսի 2026թ. թիվ 580-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ԸՍՏ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱՇԽԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 14-Ի ԹԻՎ 35-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Մարզպետի տեղակալի և մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի միջև պարտականությունները, ըստ բնագավառների համակարգման, բաշխել հետևյալ կերպ՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2022 թվականի հունվարի 14-ի «ՀՀ Լոռու մարզպետարանում ըստ բնագավառների համակարգման պարտականությունները բաշխելու և ՀՀ Լոռու մարզպետի 2021 թվականի հունվարի 8-ի թիվ 1-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 35-Ա որոշումը:

3. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում եմ անձամբ:

Ստորագրող
ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1204920311

2026-08-04 10:14:18 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2026թ. օգոստոսի 3
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2026թ. օգոստոսի 3-ի
թիվ 580-Ա որոշման

Մարզպետի տեղակալների և մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղարի միջև, ըստ բնագավառների համակարգման,
պարտականությունների բաշխում

1. Մարզպետի տեղակալ Ա.Ղարիբյան.
1) Առողջապահություն և սոցիալական ոլորտի հարցեր,
2) Գյուղատնտեսություն և շրջակա միջավայրի պահպանություն,
3) Կրթություն, մշակույթ և սպորտ,
4) Զորահավաքային նախապատրաստություն:

2. Մարզպետի տեղակալ Ռ.Մարգարյան.
1) Քաղաքաշինություն, հողաշինություն, ճանապարհաշինություն և ենթակառուցվածքներ,
2) Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցեր,
3) Զարգացման ծրագրերի մշակում և իրականացում:

3. Մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Մ.Դալլաքյան.
1) Ֆինանսական հարցեր,
2) Անձնակազմի կառավարում և փաստաթղթաշրջանառություն,
3) Իրավաբանական բաժին:

Այլ գործառույթներ.

1) Տեղեկատվություն և հասարակայնության հետ կապեր,
2) Քաղաքացիներին սոցիալական աջակցության տրամադրման աշխատանքների կազմակերպում և համակարգում,
3) Քաղաքացիների ընդունելության կազմակերպում,
4) Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և Լոռու մարզում բնակվող անձանց հետ առնչվող աշխատանքների իրականացում,
5) Պատվիրակությունների այցերի և ընդունելությունների աշխատանքների կազմակերպում և համակարգում:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

8/3/2026

X

ՄԵՐԻ ԴԱԼԼԱՔՅԱՆ

Signed by: DALLAKYAN MERI 5303860493

Մ.ԴԱԼԼԱՔՅԱՆ